Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-Գծ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 5

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 12. Գեղարքունիքի մարզ - Ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 30.12. 2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 50 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է 15 դեպքի վարում: Դեպքերը ուղղված են եղել տեսողության խնդիր ունեցող շահառուի համար օժանդակ միջոցի ձեռքբերմանը, բնակարանի սեփականության վկայականի ձեռքբերման կազմակերպմանը, Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնում փաստագրմանը, նոր անձնագրի ձեռքբերմանը, շահառուի առողջական վիճակի բարելավմանը, մարզպետարանի եւ համայնքապետարանի կողմից շահառուներին ֆինանսական աջակցության տրամադրման կազմակերպմանը, շահառուի բնակարանի կոյուղու վթարի վերացման կազմակերպմանը: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 66 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 26 շահառուի հոգեբանը անհատական խորհրդատվություն է տրամադրել, իսկ 38 շահառուներ ներգրավվել են հոգեբանական խմբային հանդիպումներին:
  - Շփման և զբաղվածության կարիք ունեցող 37 շահառուներ մասնակցել են կենտրոնում գործող երգ-երաժշտության, գեղարվեստական գրականության, ասմունքի, տեղեկատվական, շյուղագործության և ձեռագործության խմբակներին:
  - Ճաշարանի 39 շահառու մասնակցել է կենտրոնում կազմակերպված Սուրբ Զատկի տոնին, Հայոց բանակի օրվան, Տեառնընդառաջին, Կրքի տոնին, շահառուների ծննդյան տարեդարձերին, Կանանց միջազգային օրվան, Մարելենդանին և Ծաղկազարդին, Մայրության եւ գեղեցկության տոնին, Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին, Առաջին Հանրապետության օրվան, Հաղթանակի օրվան, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան, Գիտելիքի եւ դպրության օրվան, Խաղողօրհնէքին, Սեւանի ցերեկային կենտրոնի հիմնադրման 21 ամյակին, Անկախության օրվան, Սահմանադրության օրվան, Տարեցների միջազգային օրվան, աշնանը, երկրաշարժի զոհերի հիշատակին, Ամանորի եւ Սուրբ ծննդյան տոներին նվիրված, ղափամայի պատրաստման, «Սեւան» ազգային պարկի բնագիտական

թանգարանում, Սեւան քաղաքի «Բոհեմ» արվեստանոց-թեյարանում, Ճամբարակի երաժշտական դպրոցում կազմակերպված մշակութային միջոցառումներին, 4 էքսկուրսիաներին դեպի ՀՀ տեսարժան վայրեր, ինչպես նաև Սևանի հոգևոր հովիվ տեր Ստեփանոսի և Ճամբարակի հոգևոր հովիվ տեր Ղևոնդի հետ տեղի ունեցած հանդիպումներին:

- o Կազմակերպվել է մեկ շահառուի հանգիստը «Ոսկե սերունդ» ճամբարում:
- o Բժշկական օգնության տրամադրման շրջանակներում 5 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 26 շահառուի համար՝ ճնշման չափում, 5 շահառուի համար՝ վերքի մշակում եւ վիրակապում:
- o 3 շահառու (շարունակական) օգտվել է լվացքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Տեառնընդառաջին նվիրված միջոցառումները (տե՛ս հետևյալ հղումներով՝ http://surl.li/rukec, http://surl.li/rukfn, http://surl.li/rxisi),
- Հիշողության խաղը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rukga),
- Հատված թումանյանական օրերից (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rukgw),
- Շահառուների առօրյան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rukhy),
- Երգ-երաժշտության խմբակը (տե՛ս հետևյալ հղումներով՝ http://surl.li/ruklik, http://surl.li/uhqxo, http://surl.li/lblvgg, http://surl.li/oxkddd),
- Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառումները (տե՛ս հետևյալ հղումներով՝ http://surl.li/rukio, http://surl.li/rzzhe, http://surl.li/rukka, http://surl.li/rukif),
- Շահառուների ծննդյան տարեդարձերին նվիրված միջոցառումները (տե՛ս հետևյալ հղումներով՝ http://surl.li/ryktp, http://surl.li/rykvr, http://surl.li/uhrcl, http://surl.li/qjjxux),
- Գրական խմբակը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rykwo),
- Սուրբ Զատկի տոնի նախապատրաստական աշխատանքները (տե՛ս հետևյալ հղումներով՝ http://surl.li/rykym, http://surl.li/rylab),
- Անվճար վարսավիրական ծառայությունների մատուցումը Սեւանի կենտրոնի շահառուներին (տե՛ս հետևյալ հղումներով՝ http://surl.li/uhqqy, http://surl.li/aawmtf),
- Սուրբ Զատկի տոնին նվիրված միջոցառումը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uhqvb),
- Հոգեբանական խմբային աշխատանքը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/zhyxax),
- Ճաշարանի շահառուների մասնակցությունը Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառմանը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ayglq),
- Շահառուների համար կազմակերպված էքսկուրսիան դեպի Դիլիջան, Հաղարծին եւ Գոշավանք (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/misxwa),
- Էքսկուրսիան դեպի Գառնի, Գեղարդ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/zbczeu),
- Էքսկուրսիան դեպի Օձուն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ivkjhr),
- Անկախության տոնին նվիրված միջոցառումը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/xhxsnp),
- Ձեռագործության խմբակը (տե՛ս հետևյալ հղումներով՝ http://surl.li/rhhlly, http://surl.li/ntevwu),
- Կարի խմբակը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/zbaael),
- Աշնանը նվիրված միջոցառումները (տե՛ս հետևյալ հղումներով՝ http://surl.li/bwfxfo, http://surl.li/klkzbr),
- Շահառուների համար. «Բոհեմ» արվեստանոց-թեյարանում կազմակերպված մշակութային միջոցառումը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/kgaiey),
- Շահառուների այցելությունը «Սևան» ազգային պարկի բնագիտական թանգարան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/pocqqe),
- Տարեցների միջազգային օրվան նվիրված միջոցառումը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/heksae),
- Ղափամայի պատրաստման միջոցառումը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/xkslјz),

- Ամանորին նվիրված միջոցառումը տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ykmfzw):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում.

- Սնանի և ճամբարակի պատասխանատուները և սոցիալական աշխատողները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից «Սոցիալական դեպքի վարման մեթոդաբանությունը» թեմայով Երևանում կազմակերպված վերապատրաստմանը:
- Բարեգործական ճաշարանի բոլոր աշխատակիցները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված թիմ բիլդինգին՝ ուղղված Կազմակերպության ողջ անձնակազմի թիմային ոգու բարձրացմանը, փորձի փոխանակմանը:
- Բարեգործական ճաշարանի խոհարարները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված «Առողջ սնուցման սկզբունքները» թեմայով վերապատրաստմանը:
- Արդյունավետ համագործակցություն է իրականացվել մարզում գործող Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների, համայնքապետարանների, քաղաքապետարանների, հասարակական և առողջապահական կազմակերպությունների հետ:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| Ի/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 50/50 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 34 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 25 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 12 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 12 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 17 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 25 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | - |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 50 |
| 3. | Այլ ծառայություն (նշել) ժամանցի կազմակերպում<br>Բժշկական օգնություն<br>Լվացքի ծառայություն | 39<br>28<br>3 |

Կազմակերպության ղեկավար ___Երվանդ Մխիթարյան___ «30» 12.2024թ.